

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՄՕՐՈՒՍ (ՄԱՐԳԱՐ) ՍՏԵՓԱՆԻ ՀԱՍՐԱԹԵԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵԼՈՅԹՆԵՐԸ ԲԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ (1965-66)

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ
varuzhan.poghosyan@bk.ru

Մօրուս (Մարգար) Ստեփանի Հասրաթեանը (1903-1979) յայտնի պատմաբան եւ բանասէր էր, Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան գիտութեան վաստակաւոր գործիչ (1961), Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի թղթակից անդամ (1963):

Նա ծնունդ է Քանգեզուրի գաւառում, ուսումը ստացել Բաքու: Ի սկզբանէ յեղափոխական գործիչ էր, ուստի 1918-20ին այդ քաղաքում մասնակցել է Հիւսիսային Կովկասի յեղափոխական շարժումներին: Իսկ հայրենիք վերադառնալուց յետոյ, 1920ին, եռանդուն մասնակցել է նաեւ զանգեզուրեան յեղափոխական շարժումներին:

Հասրաթեանը 1922-24՝ սովորել է Երեւանի պետական համալսարանի պատմա-բանասիրական բաժնում, իսկ ուսումն աւարտելուց յետոյ գործուղուել Լենինգրադ կրթութիւնն թեկնածուականում շարունակելու համար, որտեղ Նիկողայոս Մառի եւ Յովսէփ Օրբելու ղեկավարութեամբ խորացել է հայագիտութեան ասպարէզում: 1932ին վերադարձել է Երեւան, 1933-35՝ եղել Պատմութեան ու նիւթական կուլտուրայի ինստիտուտի տնօրէնի տեղակալ, 1934-36՝ յեղափոխութեան թանգարանի տնօրէն, իսկ 1937ին նշանակուել է Երեւանի Մատենադարանի տնօրէն: Սակայն նրան՝ արդէն ձերբակալուած բանաստեղծ Եղիշէ Չարենցի մօտ ընկերոջը, 1938ին կալանաւորել են հակայեղափոխական, հակախորհրդային գործունէութիւն ծաւալելու եւ տրոցկիստական ազգայնական խմբին յարելու մեղադրանքով: Այդուհանդերձ, շուրջ երեք տարի անց նա բանտից ազատ է արձակուել¹: Նրա ազատման գործում կարեւոր դեր է կատարել նրա մօտ ընկերը՝ պատմաբան Բորիս Պիոտրովսկին: Հասրաթեանը եղել է սերտ բարեկամական յարաբերութիւնների մէջ ոչ միայն նրա ու Չարենցի, այլեւ Ակսէլ Բակունցի, Աւետիք Իսահակեանի, Դերենիկ Դեմիրճեանի, Մարտիրոս Սարեանի հետ:

Հասրաթեանը 1940ից զբաղուել է գիտահետազօտական աշխատանքներով՝ ճարտարապետութեան, հնագիտութեան, բանասիրութեան եւ հայ ժողովրդի հին ու միջին դարերի պատմութեան ուսումնասիրութեան աս-

¹ Ա. Դոլլփանեան, *Մօրուս Հասրաթեան. ինքնութեան եւ ժառանգութեան վաւերագիրը*, Երեւան, 2022, էջ 44-46:

պարէզներում: 1940-41՝ աշխատել է պատմական յուշարձանների պահպանութեան կոմիտեում, 1942-46՝ գրականութեան ինստիտուտում եւ միաժամանակ վարել Հայաստանի նորաստեղծ գիտութիւնների ակադեմիայի հասարակագիտական բաժանմունքի գիտական քարտուղարի պաշտօնը: 1947ից նա տասը տարի եղել է Գիտութիւնների ակադեմիայի պատմութեան ինստիտուտի աշխատակիցը, իսկ 1964-75՝ Հայաստանի պատմութեան թանգարանի տնօրէնը: Նրա ղեկավարութեամբ թանգարանը միջազգային ճանաչում է ստացել, քանզի հայկական մշակոյթը ցուցահանդէսներով ներկայացուել է տարբեր երկրներում, այդ թւում՝ Փարիզում:

Հասրաթեանը գրել է մեծ թուով գիտական աշխատութիւններ, որոնք բարձր մակարդակ ունեն: Նրա գրչին են պատկանում Հայաստանի պատմութեանը, հնագիտութեանը, բանասիրութեանը նուիրուած շուրջ քսան աշխատութիւններ², որոնց մեծ մասը տարբեր լեզուներով տպագրուել է թէ՛ խորհրդային եւ թէ՛ եւրոպական երկրներում: Նա նաեւ հայերէն է թարգմանել Սայեաթ-Նովայի հայերէն խաղերը, կազմել, խմբագրել եւ ծանօթագրութիւններով հրատարակել է նրա ստեղծագործութիւնների ժողովածուները³: Կատարել է նաեւ թարգմանութիւններ⁴:

1965ին Հասրաթեանը հրաւիրուել է Հայկազեան քոլէջում դասաւանդելու համար: Նա Բէյրութում դասաւանդել է Մարտի 10ից եւ մնացել այնտեղ մէկուկէս տարի: Վ. Պարսամեանը նշում է, որ նա «իր կենդանի ու հմայիչ խօսքով լիբանանահայութեանը ծանօթացրեց Մայր հայրենիքի աննախընթաց վերելքին, գիտութեան ու մշակոյթի ծագմանը, նպաստեց երիտասարդ հայագէտների պատրաստմանը, հայրենիք-սփիւռք գիտական կապերի ամրապնդմանը»⁵:

Ստորեւ ներկայացնում ենք Մօրուս Հասրաթեանի գրած երկու հետաքրքիր փաստաթղթեր Բէյրութում իր գործունէութեան մասին:

² Տե՛ս օրինակ՝ Մ. Հասրաթեան, *Հայաստանի յուշարձանները*, Բէյրութ, 1975. նաեւ նոյնի՝ *Պալմա-հնագիտական ուսումնասիրութիւններ*, հրատ. Երեւան, 1985. նաեւ նոյնի՝ *Թուրքիայի պալմութեան ուրուագծեր*, հրատ. Երեւան, 1986 (Ս. Ֆ. Օրեշկովայի եւ Եւ. Ա. Պետրոսեանի հեղինակակցութեամբ). նաեւ նոյնի՝ *Յօդուածների ժողովածու*, հրատ. Երեւան, 1995. նաեւ նոյնի՝ *Յուշաբեկորներ, արձակ էջեր, եւ...*, հրատ. ԿԼՆՀ, թիւ 10, տպ. United Printers & Traders, Պէյրութ, 2007:

³ Սայեաթ-Նովա, *խաղերի ժողովածու*: Հայերէն, վրացերէն եւ ադրբեջաներէն խաղեր, Հայպետհրատ, Երեւան, 1945. նաեւ՝ *Սայեաթ-Նովա*, Հայերէն, վրացերէն եւ ադրբեջաներէն խաղերի ժողովածու, հայպետհրատ, Երեւան, 1959, (վերատպուել է 1963ին). նաեւ՝ *Վրաց գրականութեան ընտիր էջեր*, հրատ. Երեւան, 1961:

⁴ Տե՛ս օրինակ՝ *Վրացական պոեզիա*, հրատ. Երեւան, 1983:

⁵ Վ. Պարսամեան, *Մօրուս Հասրաթեանի 80ամեակի առիթով (Մօրուս Հասրաթեան. նշանատր սիւնեցին, ականատր պալմաբանն ու բանասէրը)*, Երեւան, 2017, էջ 72:

ԵՐԿՈՒ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ⁶



Նստած, ծախեն աջ՝ Հասարթեան, հայրենի հանրաճանաչ ասմունքող
Սուրեն Քոչարեան եւ վեր. Տիգրան Խրոյրեան

Ձեր առաջին հարցերին կարող եմ լրիւ պատասխանել, որ արդէն երեք ամիս է, ինչ գտնուում եմ Բէյրութում, Հայկազեան քոլէճի հայագիտական ամբիոնի հրաւերով, քոլէճում կարդալու հայ արուեստի եւ հայոց պատմութեան կուրսը: Առաջին անգամն է, որ գալիս եմ արտասահման: Տարրական կրթութիւնս ստացել եմ Հայաստանում, միջնակարգ կրթութիւնս՝ Բաքուի ռուսական դպրոցում, բարձրագոյնը 40 տարի առաջ, Երեւանի հայկական նորաստեղծ Համալսարանի պատմաֆիլոլոգիական (պատմաբանասիրական - Վ.Պ.) ֆակուլտետում, իսկ ասպիրանտական շրջանը անցել եմ Լենինգրադում, աշակերտելով յայտնի արեւելագէտներ Նիկոլայ Մառին եւ Յովսէփ Օրբելուն: 35 տարի է, ինչ դասախօս եմ Երեւանի բարձրագոյն հաստատութիւններում. աւանդում եմ հայագիտական առարկաներ եւ Հին Արեւելքի պատմութիւն: Այժմ Հայաստանի պատմութեան թանգարանի տնօրէնն եմ:

Արդէն բաւականին տարիքս եւ շատ զբաղուած լինելս պատճառ չդարձան հրաժարուելու այդ հրաւերից, որովհետեւ երկու հանգամանքներ ատելի զօրաւոր գտնուեցան: Առաջինը՝ իմ բազմահազար ազգակիցների գոյութիւ-

⁶ Փաստաթուղթը պահում է Հայաստանի ազգային արխիւում, ֆ. 1109 (Մ. Հասարթեան), ց. 1, գ. 221, էջ 1-6:

նը Լիբանանում, մասնատրապէս Բեյրութում, երկրորդը՝ պատմական Փիւնիկիայի հազարամեակների մշակութային շերտեր ունեցող հողի վրայ գոյատևող չքնաղ Լիբանանը:

Բայց եւ Լիբանանը սիրում եւ անոր կեանքով հետաքրքրւում եմ ոչ որպէս շարքային մի արեւելագէտ-հնագէտ, այլ՝ որպէս հայ, լեցուած երախտագիտութեան զգացումով, որովհետեւ այստեղ հարազատի հիւրընկալ ապաստանն է գտել հայրենի հողից բռնի վտարուած ազգակիցներիս մի մեծ բազմութիւն. քաղաքացիական լիակատար իրաւունքներով՝ ազգային, կրօնական, մշակութային: Այլ կերպ էլ չէր կարող լինել արաբական առաջաւոր մի երկրում, որ ունի հազարամեակների մշակոյթ, ազատասէր ու միշտ վեր ծգտող, կրօնական բազմազան համայնքներով եղբայրաբար ապրող շինարար ժողովուրդ՝ խաղաղասէր կառավարութեամբ, որի - երկրին համապատասխան - սիմբոլիկ զինանշանն է հազարամեայ մշտադալար մայրին: Բնական է. այսպիսի մի երկրում հիւրընկալուած ոչ արաբները, մասնատրապէս հայ գաղութը, իր քրտինքով, մտային կարողութիւններով, իր հինատուրց շինարար ոգով պէտք է որ պարտք չմնայ իր երկրորդ հայրենիքին, ցուցաբերելով իր հարազատութիւնը եւ սրբութեամբ կատարելով իր քաղաքացիական պարտականութիւնը:

Հայերի եւ Լիբանանի ու Սիրիոյ ժողովուրդների ծանօթութիւնն ու բարեկամութիւնը նոր չէ, այլ ունի հազարամեակների անցեալ: Փոխադարձ ազդեցութիւնները, մշակութային եւ այլ շփումները նոյնիսկ արեւակցական խաչածեւումները ծագել են խորունկ դարերէն սկսած, տակաւին 15-14րդ դարերէն, երբ հեթիթները շարժուեցին հարաւ եւ ընդհարուեցին նոր թագաւորութեան Եգիպտոսի հետ՝ Սիրիա փինիկեան հողում: Հեթիթներին ենթարկուած հայ-արմէնները զգալի թիւ էին կազմում անոնց բանակում: Հայկական կարճատեւ կայսրութեան ժամանակ, Տիգրան Բ.ը 15-17 տարով (83-66 թթ.) միայն իշխեց նաեւ Սիրիային ու Փունիկիային եւ հելլենիստական հզօր Անտիոքը դարձաւ անոր երրորդ մայրաքաղաքը: Հայաստանը անհամեմատ ցածր մակարդակի վրայ էր, ուստի հայկական հին ու նոր քաղաքների բնակչութիւնը, բռնի թէ կամաւոր, համալրում էր Սիրիայի, Փիւնիկիայի եւ Կապպադոկիայի յոյն եւ սեմական բնակիչներով: Այս երկրների մշակութային ազդեցութիւնը Հայաստանի վերայ շարունակուեց մինչեւ քրիստոնէութեան 5րդ դարը: Փունիկիային պարտական են նաեւ հայերը իրենց հինատուրց այբուբենով, որը վերջին հաշուով փունիկեանի թոռն է, իսկ 21-22 դար առաջ հայերը գրում էին արամեական լեզուով ու տառերով, ապա՝ յունարէն:

Միջերկրականի գեղատեսիլ ափերին ծգուող կանաչ լեռներին յենուած այս մշտապէս փոքրիկ երկիրը մեծ գործեր է կատարել, որոնց արժէքն ու յիշատակը տասնապատիկ աւելի մեծ է, քան երկրի ու բնակչութեան քանակը (այս լոզունգը պէտք է այժմ էլ դառնայ լիբանանցուն ուղեկցողը): Յիշենք հերոսական Կարթա-հաշթան (Կարթագէնը) իր բարձր ագրիկոլտուրայով

(երկրագործութեամբ - Վ.Պ.), տեքնիկ զարգացմամբ, հերոսուհիներով ու Հաննիբալով⁷։ յիշենք մեծ ծովագնացութիւնն ու առաջին մեծ նաւաշինութիւնը, շուրջափրիկեան ճանապարհը, առաջին այբուբէնը, որ մայրն է շատ-շատերի, յիշենք բալթիկ սաթի, անագի, ապակու, ներկերի, ապխտած ձկան, գինիի, յետագայում մետաքսի տարածումը աշխարհով մէկ։ Հեքիաթային Եգիպտոսի ու Միջագետքի ծովային ու ցամաքային հեռաւոր ուղիները անցնում էին այս երկրով։ Գեբալն (աքքադացիները քաղաքն անուանում էին Գուբլ, Աստուածաշնչում այն յիշատակում է Գեբալ անունով - Վ.Պ.) ու Ծուրը (հաւանաբար Տիւրոս՝ Սուր, քաղաքի մասին է խօսքը - Վ.Պ.), Սայիդան (ծանօթ նաեւ Սիդոն անունով - Վ.Պ.), Արադն (Լաթաքիոյ հանդիպակաց Արուատ կղզին - Վ.Պ.) ու Բերիթը (Բէյրութի հին անունը - Վ.Պ.) եւ այլ ծովափնեայ քաղաք-պետութիւնները, մինչեւ Ուգարիթ, Բեքա դաշտի հետ շատ «հիւրեր» է տեսած. տուժելով ու մշակութային շերտերով հարստանալով։ Այդ տեսակէտէն որոշ նմանութիւն ունի Լիբանանը, պատմական Հայաստանի հետ։ Պատահական չէ, որ նոյն թուականին (66/65) հիմքը դրուեցաւ Հռոմի հզօրութիւնն արտայայտող հսկայ Բաալբէկի եւ հայկական հելլենիստական մինիատիւր Գառնիի տաճարներուն։

Երկու դարերէ աւելի (652–869) Հայաստանը եւս անցաւ արաբական աշխարհաճաւալի ոլորտին մէջ եւ գործուն մասնակցութիւն ունեցաւ Արեւելքի նոր քաղաքակրթութեան ընդհանուր շինարարութեան գործում։ Հայերը յաճախ հակում էին արաբական խալիֆների կողմը։ Բնակչութեան մեծաքանակ դրացիութիւնը՝ երկուստեք, մարդաբանական շեշտուած նմանութիւն է ստեղծել, մանաւանդ հայ-լիբանանեան կերպարների միջեւ։ Հայ աղանդաւորական զօրաւոր շարժումները 8-9րդ դարերում համակել էր Մերձաւոր Արեւելքը։ Բիւզանդիայէն ու Հայաստանում հալածուած մեծաքանակ հայ աղանդաւոր Պապիկեաններ ու Թոնդրակեաններ անցան արաբական խալիֆաթի կողմը, ստեղծեցին ուժեղ ռազմական համայնքներ եւ պայքար ծաւալեցին Բիւզանդիայի դէմ։ Վերջում պարտութիւն կրելով, իջան հարաւ ու երկար ժամանակ պահպանեցին հին զորոաստրական (զրադաշտական) ու մեսալիան էլեմենտներ (տարրեր - Վ.Պ.) ունեցող իրենց աղանդը՝ միաստուածութիւնը, որպէս ճշմարտութիւն, որպէս հաւասարութեան ու ազատութեան սիմբոլ, ուղիղ ընթացքով դէպի Աստուած ընթանալու, առանց հոգեւոր միջնորդ պաշտօնեայի։ Կինը իրաւահաւասար էր, այլ մարդը՝ ռազմիկ։ Այս բազմահազար հայ աղանդաւորներին մուսուլման իշխանաւորները հովանաւորում եւ սիրաշահում էին որպէս ռազմա-

⁷ Հաննիբալը (մ.թ.ա. 247–183) հին աշխարհի կարկեթոնի մեծագոյն զօրավարներից ու պետական գործիչներից մէկը, հռոմէական հանրապետութեան երդուեալ թշնամին։ Մ.թ.ա. 189ին ժամանել է Հայաստան՝ Արտաշէս Ա. թագաւորի մօտ եւ նրա պատուէրով նախագծել է ու հիմնել Արտաշատ քաղաքը։

կան ուժ: Սրանց ժառանգներն արդե՞ք արդի դուրուզները⁸ չեն, հազար տարի առաջ Ջրիս անունով իրենց ամրոցի քիչ աղաաղուած անունը կրելով:

Բիւզանդական կայսրերը այդ հայ աղանդաւորների մի այլ մեծ համայնք, տասնեակ հազարների հասնող, բռնութեամբ փոխադրեցին Բալկաններ, կրկին որպէս ռազմական ուժ: Սակայն սրանք եւս ամուր մնացին իրենց աղանդին, իրենց «բանալի ճշմարտութեան» սուրբ գրքով, իրենց կոչելով կատարեալներ (այստեղից էլ katarներ), տարածելով իրենց ուսմունքը եւ շատ համակիրներ ունենալով սլաւոն աշխարհում, նոյնիսկ Կիեւեան Ռուսիայում, արմատը հանդիսանալով Եւրոպայի միջնադարեան աղանդաւորական մեծ շարժումների:

Հայ-լիբանանեան փոխազդեցութիւններն աւելի զարգացան 11-15րդ դարերում՝ Կիլիկեան հայ թագաւորութեան եւ խաչակիրների ու մամուլների հիմնած իշխանութիւնների ժամանակներում: Բաւական է ասել, որ վաղ միջնադարէն սկսած Ուրֆա-Եդեսսան, Անտիոք-Անթակիան, Ամիդա-Դիարբեքիրը յետագայում՝ Ալեքսանդրետա-Իսկենդերունը, Մարդինն ու Հալէպը, թերեւս նաեւ Տրիպոլիսը ունեցել են մեծաքանակ հայ բնակիչներ: Եթէ լիբանանեան ծովափնեայ քաղաքները դժուարութեամբ, բայց նուաճում էին հզօր պետութիւնների կողմից, ապա լեռնային Լիբանանը միշտ կարողանում էր հիմնականում պահպանել իր ներքին անկախութիւնը: 1516ին Սիրիան նուաճող հզօր Թիւրքիան երեք դար չկարողացաւ լրիւ նուաճել լեռնային Լիբանանը: Այն-Դարայի ճակատամարտը (1711) դրա լաւագոյն ապացոյցն է: Այս ժամանակներում մեծ քանակութեամբ հալածական հայեր Կիլիկիայէն ու Հիւսիսային Միջագետքէն ապաստան էին գտնում Լիբանանի լեռներում: Վերջապէս Սիրիան ու Լիբանանը դարձան ամենամեծ ապաստարանը 1915ին եւ յետագայում հալածական բազմահազար հայերի համար, փրկուած թուրքական մեծ ջարդերից ու հալածանքներից: Իր հայրենիքում ամէն ինչ կորցրած հայկական այդ մեծ բազմութիւնները, հիւրընկալ արաբական աշխարհում գտան իրենց ընձեռած մարդավայել կեանքի պայմանները ու երկու տասնամեակում յառնեցին փիւնիկի նման: Այս ամէնը միայն խորացրել է իմ հայրենակիցների երախտապարտութեան զգացումը:

Ինչպէ՞ս գտայ Լիբանանը: Այնպէս, ինչպէս պատկերացնում էի, մի քիչ էլ աւելի. տեսնելով շինարարական բոլորն թափը եւ մշակութային կեանքի արագ վերելքը: Բէյրութը զարգանում է հեքիաթային արագութեամբ, ինչպէս իմ հարազատ Երեւանը: Որպէս մանկավարժ եւ հնագէտ-պատմաբան, ինձ նախ եւ առաջ հետաքրքրում էր դպրոցական կեանքը եւ բարձրագոյն

⁸ Դրուզներ.- Արաբ, միաստուածեան, արաբախօս համայնք, որոնք հաւատում են հոգու վերամարմնաւորման եւ յափտենականութեան: Նրանց կրօնքը ունի քրիստոնէական, իսլամական, զրադաշտական եւ այլ բաղադրիչներ:

ուսման դրուածքը, ինչպէս նաեւ թանգարանային ու հնագիտութեան դրուածքը: Լիբանանը, Հայաստանի նման (դեռ շատ ատիկ), կարելի է համարել անտանիք, բացօթեայ թանգարան: Բէյրութի թանգարանային շէնքը, իր հին եգիպտական ոճով, հիանալի է, ըստ ամենայնի: Յուցադրուած էքսպոնատները (ցուցանմուշները - Վ.Պ.) թանկագին են ու բացառիկ: Հնագիտական աշխատանքներին յատկացում է մեծ ուշադրութիւն: Գովելի է յատկապէս պատմական յուշարձանների ռեստավրացիոն (վերականգնումի - Վ.Պ.) աշխատանքը: Ուսումնական գործը գտնուում է բարձր մակարդակի վերայ: Գիւղերը, համապատասխան իրենց լանդշաֆթին – գեղեցիկ շէնքերով, հիանալի ներդաշնակութիւն են կազմում ատիկ գեղեցիկ բնութեան հետ: Լիբանանը իրօք, իր հեռանկարով Ասիոյ Զուիցերիան կարելի է համարել: Ահա ի՞նչ է բերում երկրին խաղաղ շինարարութիւնը:

Որպէս բարեացակամ օտարական ի՞նչ թերութիւններ նկատեցի: Անշուշտ, դրսից եկած ուշադիր մարդը, առաջին հերթին նկատում է եւ թերութիւնները, սակայն միշտ ենթադրելով, թէ տեղի ուշիմ բնակիչները եւ ղեկավարները չեն նկատում այդ, մինչդեռ մեծ մասամբ իրենք են օդային հայեացքով նայում, չկարողանալով թափանցել առաջնակարգ ու երկրորդական պորթլեմների խորքը, յաճախ նկատելով, ասենք, քաղաքի շինարարութեան կոսմոթիք (գեղագիտական - Վ.Պ.) պակասութիւնները: Բայց եւ այնպէս չի կարելի չնկատել, որ Բէյրութի նման արագ աճող ու բարգաւաճող քաղաքի մէջ պողոտաներում պակասում են աղբարկղերը շինարարութեան ընթացքում, հողի սղութեան պատճառով, պակաս ուշադրութիւն է յատկացում կանաչապատման տարածութիւններին ու հանգստեան շատ կանաչ վայրեր ունենալու պահանջին (ծովափը, մօտակայ ամառանոցային բարձունքները բաւական չեն դորա համար), որ մանաւանդ օտարների ու կարիքաւորների համար փոխադրութեան հնարաւորութիւնները բարդ են: Թաքսիներն ու սերվիսները անշատ չեն իրարից տարբերանշանով, չունեն վազքի գնացուցանակ եւ վարորդները յաճախ չարաշահում են: Փոստարկղները շատ քիչ են քաղաքում: Որ քաղաքը արագ մեծանում է, իսկ փողոցների անուններն ու թուահամարները իրենց դերին շատ քիչ են ծառայում. հին թաղերի անուններն են գերիշխում, որոնց ծանօթ են հին բնակիչները:

Իմ նախնական տպաւորութիւնն այն է, որ քաղաքաշինութեան արագ ընթացքում անհատական շահագրգռութիւնը հնարաւորութիւն չի ընձեռում Արեւելքին ու Լիբանանին համապատասխանող ճարտարապետական ոճ ստեղծելուն: Միթէ՞ օտարները եւ երիտասարդ սերունդը պէտք է տեսնեն ու զգան երկրի ու քաղաքի անցեալի նկարագիրը միքանի շէնքերով ու Բէյթ-էդ-Դինով⁹: Արդի երիտասարդ սերունդը եւ շատ նորոյթներ տեսնելու

⁹ Փոքր ասան՝ Լեռնայիբանանի Շուֆի շրջանում, ծովի մակերսից 860 մ. Բարձրութեամբ: Նշանաւոր է իր պալատով, որը կառուցել է էմիր Բեշիր Բ. Շիհապին, 1788ին եւ այնտեղ տեղափոխել իր կառավարչական նստավայրը 1811ին:

անյայդ աչք ունեցող թիրիստը ավստում ու զայրանում են, երբ տեսնում են Բաալբէկն ու Բէյթ-Մերին հին կերպարանքից զրկուած, որ կատարուել է վաղուց, յօգուտ նորեկ իշխողի շահերի, հնի թշնամի նոր գաղափարախօսութեան ժխտական ոգու եւ աներման զգացումի: Մեր արդի սերունդն էլ նոյնպիսի պատասխանատուութեանն ու քննադատութեանն է ենթարկուելու գալիք սերունդների կողմից, որ այսօրը պատմութիւն չենք համարել եւ հոգատար չենք եղել մեզ ժառանգութիւն հասած մօտիկ անցեալի լաւին ու իր ժամանակի բնորոշին:

Որպէս հնագէտ, ես հիացած եմ այն հոգատարութեամբ, որը ցուցաբերում է Լիբանանի կառավարութիւնը հին յուշարձանների պեղման ու ռեստավրացիոն աշխատանքների բնագաւառում:

ՀԱՄԱՌՈՏ ՀԱՇՈՒԵՏՈՒՌԹԻՒՆ **ԲԷՅՐՈՒԹՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԻՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ¹⁰**

Սփիւռքահայ գլխաւոր կենտրոն Բէյրութի հայկական կազմակերպութիւնների եւ Հայկազեան քոլէջի պահանջով. Հայաստանի կառավարութիւնը գործուղեց ինձ Բէյրութ՝ մանկավարժական աշխատանքի՝ մէկ տարի ժամանակով: Ես մնացի (իրենց, եւ մեր դեսպանատան պահանջով) մօտ մէկ եւ կէս տարի: Բէյրութ հասայ Մարտի 7ի երեկոյեան եւ աշխատանքի անցայ 1965 Մարտի 10ից, որը տեւեց մինչեւ 1966 Յուլիսի 10ը: Բէյրութից դուրս եկայ Յուլիսի 22ին:

Դասաւանդում էի ոչ միայն Հայկազեան քոլէճում այլեւ՝ նոր կազմակերպուած Հիւսիսեան հայագիտական բարձրագոյն դասընթացներում:

Երկու տեղում էլ ասանդում էի հայոց պատմութիւն, հայ արուեստի պատմութիւն, հայկական հնագիտութիւն եւ ընդհանրապէս հայագիտութիւն:

Միաժամանակ քաղաքի եւ շրջակայքի գերազանցօրէն հայ մտաւորականութեան համար կարդում էի բաց դասախօսութիւններ շաբաթական մէկ օր (Չորեքշաբթի) երեկոյեան ժ. 8ից մինչեւ 10ը: Ամէն անգամ ներկայ էին լինում 350-400 մարդ: Ըստ որում առաջին անգամ մէկ դահլիճի մէջ հաւաքում էին հայկական բոլոր քաղաքական եւ կրօնական կազմակերպութիւնների եւ համայնքների ներկայացուցիչներ: Թեմաները գլխաւորապէս հայոց պատմութեան շուրջ էին: Իհարկէ, այդ ամէնը, սկզբից մինչեւ վերջ յաջողում էր պայքարով. տեղական իշխանութիւնները յարուցում էին ամէն կարգի դժուարութիւններ: Միաժամանակ Սովետական Հայաստանի, հայոց պատմութեան, հայկական հարցի եւ օրուայ քաղաքական եւ մշակու-

¹⁰ ՀԱԱ, ֆ. 1109 (Մ. Հարաթեան), ց. 1, գ. 221, էջ 7-8:

թային հարցերի շուրջը կարդացել եմ մօտ 70 դասախօսություն եւ ունեցել մի այդքան էլ՝ ելոյթներ, զանազան ակումբների դահլիճներում, դպրոցներում, ժողովներում, հայկական գիւղերում (Սիրիայի եւ Լիբանանի), ինչպէս նաեւ Տրիպոլի, Հալէպ, Լաթաքիա քաղաքներում: Մասնակցել եմ Սայեաթ-Նովայի արաբերէն հրատարակութեանը, խմբագրել հայագիտական ժողովածուներ:

Մ. Հասրաթեան

19/12-1966 թ.

Քաղ. Երեւան

MORUS HASRATIAN, A VISITING PROFESSOR AT
HAIGAZIAN UNIVERSITY IN 1965-1966
(SUMMARY)

VARUZHAN POGHOSYAN
varuzhan.poghosyan@bk.ru

Professor Morus Hasratian (1903-1979), a renowned philologist, archeologist and historian, was a prominent figure in Soviet Armenia. He was the director of the History Museum of Armenia for several years and held high-level administrative positions both in educational and academic institutes.

In an unprecedented step in Lebanese Armenian history, professor Hasratian was invited to Haigazian University (College then) as a visiting professor to teach Armenian history, Armenian archeology, and Armenian art history. He taught both at Haigazian and the newly founded AGBU Yervant Hosisian Armenological Center. Besides, he gave weekly evening lectures on Armenian history and culture. Dr. Hasratian was the first scholar to be invited to Lebanon for such a long period. It followed the Cold War meltdown and helped in reducing rivalry between the contesting Lebanese Armenian parties.

Professor Hasratian was originally invited as a visiting professor for a year. However, due to the success he encountered, he was asked to extend his stay for a third semester. This was endorsed by the Soviet embassy in Beirut.

The paper briefly outlines his biography and educational endeavors in Beirut. It includes as well two unpublished documents which Hasratian wrote, which have been preserved in the Armenian National Archive. One is a report he submitted to the Soviet authorities about his stay and cultural activities in Beirut. The other seems to be the introductory part of probably one of his first public lectures in Beirut, where he introduces himself and the reasons which made him undertake this educational mission to Haigazian and his feelings about and perceptions of Lebanon.